

Ս. Թէոդորոսի յիշատակն Հայոց եկեղեցին կատարում է մեծ պատի առաջին շարաթ օրը. շարականներից նոյն օրուայ Մանկունքը նուիրում է Ս. Թէոդորոսին. շարականը բաղկացած է երեք անից, երկրորդ տան մէջ Հատուածին համեմատ յիշուում է վիշապին սպանելը իսկ երրորդի մէջ Վենէտկի վկայաբանութեան համեմատ կուստան հրդեհելը Թէ ո՛վ է երգիչը, հայերէն վկայաբանութեան և շարականի հեղինակների մէջ կայ արդեօք նոյնութիւն, թէ տարբեր անձինք են, չենք կարող ասել: Թէպէտ և ձեռագիր շարականների մէջ շատ չենք հանդիպում Ս. Թէոդորոսի շարականին, այնուամենայնիւ Ժ. Գորու մի ձեռագրի մէջ պատահել է մեզ կարգալ այդ երգը:

Հայ ժողովրդի մէջ մի ծէս է մնացել, որ կատարուում է Ս. Թէոդորոսի տօնի օրը, այդ է Հատիկ (վրայերէն ծանտիլ) բաժանելու սովորութիւնը: Մեզ ծանօթ չէ թէ ժողովրդի մէջ ի՞նչ աւանդութիւն կայ այդ մասին: Սակայն ճառքնորի մէջ մի համառօտ պատմութիւն կայ, որից երևում է որ երբ Յուլիանոս ուրացողը կամենում էր մայրաքաղաքի քրիստոնեայ ժողովրդին բռնութեամբ զոհի միս ուտեցնել, Ս. Թէոդորոս տեսիլքի մէջ երևեցաւ ժամանակի պատրիարքին և պատուիրեց, որ ալքատ ժողովրդին այն օրը խաշած ցորեն բաժանեն (կուլիրա) իրրև կերակուր. այդ տեսիլքին համեմատ յունաց մէջ սովորութիւն դառաւ ամէն տարի Ս. Թէոդորոսի օրը կուլիրա կամ հատիկ բաժանել: Հատիկի սովորութիւնն այսպիսով յոյներին է անցել Հայոց մէջ, թէ ունի և մի տեղական պատճառ. շատ հետաքրքիր կը լինի պարզել ժամանակին:

Ըստ Աւգերեանի՝ Ս. Թէոդորոսի նահատակութեան օրը 305 թուի փետրվարի 17 է: Կ. Կ.



ՎՐԸՅ ԴԱՐՉԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՆՈՅ:

(Յանդուած Արարատի Գ.)

Արարատի անցեալ տարուայ մայիս տմսի համարում հրատարակելով ճառքնորի մէջ գտնուած խորհնացու պատմութեան մի հատուած, որ զգալի կերպով տարբերում է սովորական բնագրից՝ մենք այն կարծիքն էինք յայտնել, թէ գուցէ ճառքնորի կազմողները ուրիշ կերպ խմբագրուած մի պատմութիւն աչքի առաջ ունէին, որ աւելի ճին էր և նախնական քան մեր ձեռք հասածը և վեր-

ջինս խմբագրողի համար իրրև գլխաւոր աղբիւր էր ծառայում: Արարատի սոյն համարի հետ լոյս են տեսնում երկու նոր հատուածներ, որոնք կարծես աւելի ևս հաստատում են այդ ենթադրութիւնը: Այդ երկու հատուածները վերնագրի համաձայն խորհնացու պատմութիւնից պէտք է արտագրուած լինին, բայց նոցանից մէկը ամենևին չէ գտնուում մեզ ծանօթ պատմութեան մէջ և միւսը զգալի կերպով տարբերում է համապատասխան կտորից: Վերջինս մասնաւոր հետաքրքրութեան արժանի է կրկին, ինչպէս և անցեալ տարուց հրատարակածը, այն պատճառով որ սա ևս խորհնացու պատմութեան այն տեղերից է, որոնց վերայ հիմնում է ուսուցչապետ Կարիէր իւր կարծիքը այդ գրքի անվաւերականութեան մասին: *

Կարիէրի կարծիքով խորհնացու գրքի իսկական հեղինակը Վրաց գարձի պատմութիւնն անելիս օգտուել է գլխաւորապէս Սոկրատի պատմութեան հայերէն թարգմանութիւնից, իսկ այդ թարգմանութիւնը եղել է 690 - 692 թուականներին, որից հետևում է, որ խորհնացու պատմութիւնը ամենալազ է. գարի վերջերին պէտք է գրուած լինի: Սոկրատի հայերէն թարգմանութիւնը, ինչպէս յայտնի է, մամուլի տակ է արդէն Մայր Աթոռի տպարանում՝ Արժ. Մեսրոպ վարդապետի հրատարակութեամբ: Թողնելով որ նորա վերաբերեալ խնդիրները և մասնաւորապէս խորհնացու հետ ունեցած առնչութիւնը այդ հրատարակութիւնից պարզուին, առ այժմ մենք միայն այսքանը կնկատենք, որ Սոկրատի չ հայերէն թարգմանութիւն կայ ընդարձակ և համառօտ. ընդարձակը գոնէ մեր ի նկատի ունեցած կտորի մէջ, ոչ մի յարաբերութիւն չունի խորհնացու հետ. Կարիէրի ցոյց տուած նմանութիւնները միայն համառօտին են վերաբերում և արդարև կան այդպիսի ակնյայտնի նմանութիւններ: «) Սխոււածքի Չ բառերը՝ «կին ոմն» նոյն են ոչ միայն խորհնացու և համառօտ Սոկրատի, այլ նաև ընդարձակի կամ յունարէն բնագրի մէջ. սակայն կարևորն այն է, որ այդ բոլորից տարբերում է մեր հատուածի սխոււածքը՝ ունենալով այնպիսի մի ձև, որ չէ կարող ճառքնորի կազմողի շարագրալը լինել, այլ նոյն. թեամբ աւնտած պէտք է լինի մի ամբողջական պատմութեան միջից. իսկ երանելոյն Նունէի բառերով մի անկախ պատմութիւն սկսել ոչինչ միտք չունէր:

* Նորագոյն աղբերք Մովսիսի խորհնացոյ երես 51-44 Ղեկնաւ. 1893:

է) Մծխէթի համար գործածած « քաղաք նախագահ » մակդիրը * և խաչի մասին պատմութեանն որ միայն համառօտ Սոկրատն է մէջ բերում գտնուում են թէ Խորենացու պատմութեան և թէ մեր հատուածի մէջ, բայց այդ նմանութիւնից մենք կարիէրի համած եզրակացութեան բոլորովին հակառակն ենք գտնում Նախ որ խաչի պատմութիւնը Սոկրատ մէջ է բերում անպատեհ մի տեղ. յունարէն բնագրի համաձայն պատմելով թագաւորի և թագուհու քարոզական գործունէութեան մասին՝ փոխանակ անմիջապէս տաճարի շինութեան հետ կազմուած հրաշքը կցելու մտցնում է այտեղ մի երկրորդ հրաշք խաչի մասին, որ շատ աւելի գեղեցիկ, ընդարձակ և պատճառաբանեալ կերպով պատմուած է Խորենացու մէջ: Մեզ համար հատկանայի չէ, թէ ինչո՞ւ փայտէ խաչի վերայ մի նոր լուսեղէն խաչ ի՞նչելու գրոյցը աւելի մտնէ է, քան նոյն իսկ փայտէ խաչի լուսաորուիլը և թէ ինչո՞ւ առաջինը վերջին թիւրիմացութիւնը պիտի համարուի և ոչ վերջինս առաջինից քաղուած մի համառօտ յիշատակութիւն: Մեր այս հակառակ ենթադրութեան աւելի ուղիղ լինելը նորանով է ապացուցանուում որ ինքը՝ համառօտ Սոկրատի թարգմանիչը պարզ կերպով յայտնում է, թէ որ տեղից է իւր յաւելուածներըն առել: Վերջացնելով վրաց դարձի պատմութիւնը՝ փոխանակ բնագրի համաձայն Ռուփինի մասին յիշատակութիւն անելու, նա կոտանդիանոսի հետ կապած գաշինքի վերայ աւելացնում է. « բայտ առաքելուհւոյ կրնոջն քարոզութեան, որում անուն էր Նունի, յընկերաց որոյն Հաիփսիմեայ, որ ի Հայս կատարեցաւ: Թողում ասել, որ յաղագս նորա է պատմութիւն, և հաւատարն Հայոց մեծամեծ սքանչելեօք ի ձեռն Կրիգորի Պարթևի խոստովանողի, որ ստոյգ ցուցանէ նորին զհրք: Եւ այս ամենայն լինէր ի նոյն ամբոս: Այս ուրեմն մենք կրկին, և այս անգամ հաստատուն փաստով կարող ենք ասել, որ ամենեւին մտացածին չէ Խորենացու վկայութիւնը, թէ նա այս պատմութիւները Ագաթանգեղոսից է առել, ինչպէս ենթադրում է կարիէր, և որ շատ թող են առհասարակ կարիէրի այն փաստերը, որոնցով նա աշխատում է ապացուցանել, թէ Խորենացին իւր գործածած աղբիւրների հայերէն թարգմանութիւնն է միշտ աչքի առաջ ու-

նեցել: Ներկայ դէպքում պարզ է, որ համառօտ Սոկրատի թարգմանիչը և Խորենացին օգտուել են նոյն աղբիւրից և որ վերջինս գրիթէ իւր բոլոր նիւթը այդ աղբիւրից է առել, մինչդեռ առաջինը պատահական քաղուածներ է միայն արել: Իսկ թէ ինչո՞ւ Նունէի պատմութիւնը Ագաթանգեղոսի մէջ չըկայ՝ այդ հարցին մենք կրկին կպատասխանենք. որովհետեւ մեր ձեռքը հասած Ագաթանգեղոսը նոյնը չէ, ինչ որ յայտնի էր Ժ—ԺԲ. դարերից առաջ:

Գայով այն կտորներին, որոնք նմանութիւն են ցոյց տալիս Խորենացու պատմութեան և Սոկրատի բնագրի կամ ընդարձակ թարգմանութեան մէջ՝ դարձեալ այն խիստ հետաքրքիր երևոյթն ենք նկատում որ մեր հրատարակած հատուածը դոցանից ոչ մէկը չունի իւր մէջ: Ակտուածքի և « կին ոմն » բառերի համար արդէն յիշեցինք: Անուհետեւ, Խորենացին « զբազում ախտաժէտս բրժրչկեաց » բառերից յետոյ աւելացնում է մի լրագուցիչ տեղեկութիւն՝ « և գլխովին դիին Միհրանայ առաջնորդին վրաց » և կցում է դորան թագաւորի դարձի համառօտ պատմութիւնը, որ արգարե քաղուած կարելի էր համարել Սոկրատից, բայց աւելի շուտ յունարէն բնագրից քան հայերէն թարգմանութիւնից: Արդ, կարող է պատահել որ մեր հատուածի միջից այս նոյն կտորի տեղում մի բան պակասած լինի, բայց թէ այդ պակասը մի թագաւորի և իւր կնոջ դարձի պատմութիւնն է եղել՝ ոչ մի նշանից չէ երևում: Ընդհակառակն դեր խաղացողն այստեղ նախարարներն են, և մեզ բոլորովին հատկանայի չէ, թէ ինչո՞ւ Նունէի պատմութիւնն անողը մէջ չէր բերում նորա յաջողութեան գլխաւոր փաստը, թագաւորի դարձը, եթէ այդ իրողութիւնը իրեն ծանօթ էր: Եզրակացութիւնը պարզ է: Խորենացու այն պատմութիւնը որին պատկանել է հատուածը, Վրաց դարձի համար մի հայկական աղբիւր է միայն ունեցել և Սոկրատից բոլորովին չէ օգտուել. իսկ Խորենացու մեզ հասած պատմութեան խմբագիրը հաւանականապէս նորանից ևս տեղեկութիւններ առել է, բայց ոչ անպատճառ: Կարող վերջում արուած թարգմանութիւնից, այլ Ե. դարում գրած բնագրից:

Այս հատուածը, ինչպէս և միւսը, արտագրուել է Մայր ցուցակի 923 հ. ճառընտրից և սորա վերայ ևս առաջին անգամ ուշադրութիւն դարձնողը եղել է նախորդ յօդուածագիրը՝ պ. Կ. կոստանեան:

* Կարելիք Սոկրատի անդողական թարգմանութիւնը ձեռքի տակ չունենալով այս մի նմանութիւնը նկատել չէր կարող:

Յ. Գ.: Պէտք է նկատել որ այս հատածը, խորենացու պատմութեան գլուխների գասաւորութեան համաձայն՝ անցեալ տարուայ հրատարակածի մի կտորը պիտի կաղմէր, բռնելով նորա մէջ այնպիսի մի տեղ, որի կապը մենք շատ բնական էինք գտել և նորա որևէ միջանկեալով բնդհատուած լինելը դժուար ենթադրելի: Այժմ ևս մենք այդ կարծիքը փոխելու հարկ չենք տեսնում և աւելի հաւանական ենք համարում որ եթէ խորենացու պատմութեան մի նախնական գրուածք եղել է, նիւթն էլ այնտեղ տարբեր կերպով գասաւորուած լինէր:

Կ. Վ.



* * *


Բացուեցաւ զարուն... Հոգիս բերկրութեամբ
Սըլանում է վեր, այնտեղ՝ ուր սիրով
Ժիծաղում է ինձ մի երկինք անամպ
Մընի ոսկեայ պայծառ շողերով:

Կ'ուզէի երգել, բաղցր ու ներդաշնակ,
Կորովի ձայնով, եւ վտանջ սրտեր,
Որ երգըս, որպէս զարնան յորդ վտակ
Սար, դաշտ ու անտառ, ձորեր թնդացնէր:

Եւ իմ՝ նըրազած յուսոյ մեղիղին
Նոր կեանքի զարուն կ'աւետէր մարդկան,
Եւ մարուր հաստն ինչպէս շողն այգին՝
Կը ցրուէր խաւարն մնայլ գիշերուան:

Ես սէր կ'երգէի, քայց եւ ազնիւ մարտ....
Այլ անի, ցրտերից խամրեցաւ զարուն,
Թօշնեցաւ սրտիս անոյշ կոկոն վարդ,
Կապուած է եւ լուռ վտակ կարկաչուն:

Յ. Յովնաննիսեան.



ԱՌԱՃՆԵՐ ՎԱՆԱՅ ԲԱՐՔԱՌՈՎ:

Իրիշկէ գլխաւորի փրզուճի մեծ արա-
իրիշկէ որդի փրզուճի բուճուր արա:

Խաղայ կշտափոռի:
Ձխաղայ կարմրատտի:

Խարանի գեղէն, խանցի գեղէն,
Նոյնի գեղէն, Լուրնի տնէն,
Ռէս Օխան քէս տունը շէն:

Խապար կուգեայ,
Խապար կը խանի դիս:

Խարանիս ձի պիտի,
Խառ օխնէն իմ խայրիս մարին:

Խուսի գլորաւ, գնտաւ պուտուի:
Ժառ կը յնի
Ճեօզ կը կայնի:

Ժիծեռնակը տան շինուին ի,
Ենճուղը տան աւիրութն ի:

Կայ աշխարի,
Ձկայ անապատի:

Կայ ևէզնիս որ զանէ վեր վանի:

Կնրեր ես մաճուն:
Թռեր ես առուն:

Կիրակմուտ, քնց կերակի:

Կնիկի սուտ մուղտուտ
Ուր կը պահի էլնի կասի:

Կնկայ մարդ սեղան,
Մարդու մարդ փողան:

Կոկթ (կոշտ) անձրեւի տակ նստէր, քարի դարտ կուլայ:

Համ խզան,
Համ դժվեզան:

Համ Էլայ Սորիայ տանձից,
Համ Խլայիայ ինճորից:

Հալարտ մարդու քիթն է համան,
Աշքն տանկի, խղի թաման:

Չուն գլխիդ
Հող գլխիդ:

Ճարտար մուկ Էրուտ ոտնով կը յնի անխատ:

Ճերմակիս պատի տակիս:

Մանէն մանածի,
Պատէն կահածի:

Մասխարայ,
Անճեղնեաց էլ մասխարայ:

Մեծ գլուխ դովաթի,
Պզտիկ գլուխ շոշաթի:

Մարդ ու կնիկ կռուան,
Տխմար մարդ գիտցաւ բաժուան:

Մեղաւոր նստաւ լուացք
Ձէն էտուր ամպերաց:

Մեռել ուտի կը յարի,
Կնիկանին ոտներ կը յարի: